ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-106/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 07.10.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.10.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կարիքների համար՝ Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին, և ըստ գնահատող հանձնաժողովի որոշման զբաղեցրել է երկրորդ տեղը, իսկ առաջին տեղը զբաղեցրել է

«Ագարակ» ԲԲԸ-ն: Ընկերությունը գրությունով գնահատող հանձնաժողովից պահանջել է «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտի, գնային առաջարկի և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Ուսումնասիրելով հանձնաժողովի կողմից իրենց ներկայացված պահանջված փաստաթղթերի պատճենները՝ պարզել են, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Նկատի ունենալով, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի բավարարում հրավերով սահմանված 7.9 կետի պահանջներին, 2016 թվականի սեպտեմբերի 9-ին Ընկերությունը բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով խնդրել է դադարեցնել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Ագարակ» ԲԲԸ-ի՝ հայտը բավարար գնահատելու, «Ագարակ» ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու, «Ագարակ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, «Ագարակ» ԲԲԸ-ի հետ պայմանգիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 05.10.2016թ. որոշմամբ իրենց 09.09.2016 թվականի բողոքը բավարարվել է:

«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.2 որոշմամբ, «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին ներկայացրած հայտը գնահատել է անբավարար և մերժել է՝ հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարցման պատասխանն այն մասին, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացրած գնային առաջարկից, որի հետ իրենք համաձայն չենք, քանի որ տեղի է ունեցել անհամապատասխանություն:

Ըստ Ընկերության՝ վերոնշվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացրած գնային առաջարկից և կից ներկայացնում են հաշվետվությունը:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 8-րդ կետի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն խնդրել է բողոքը վարույթ ընդունելուց հետո կրկին անգամ հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե և դադարեցնել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 08.09.2016թ. թիվ 6 արձանագրության 1.2 կետով կայացված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու մասին որոշումը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով հայտարարված մրցույթը չեղյալ (չկայացած) հայտարարելու մասին որոշումը՝ այդպիսի որոշում կայացված լինելու դեպքում:

Ընկերությունը խնդրել է որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց, այն է՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի կայացրած բոլոր որոշումները, այդ թվում նաև գնման ընթացակարգը չեղյալ (չկայացած) հայտարարելու և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու մասին որոշումների իրականացումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.10.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-106/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած հանձնաժողովի նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.10.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեին արված հարցման պատասխանի՝

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Ըստ Պատվիրատուի Ընկերության կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով գնման գործընթացով ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.10.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-106/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի ներկայացուցիչն առարկել է բողոքի դեմ և հայտնել է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Պատվիրատուն տարբեր մրցույթներով մի քանի անգամ հարցումներ է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ և բոլոր դեպքերում էլ ստացել է նույն պատասխանն այն մասին, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

3. ԳԲԽ-106/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-106/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված

«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 2.3 կետի համաձայն՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

(...)

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.3**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

<u>ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.</u>

(...)

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները: (...) »:

3. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 17.08.2016թ. ներկայացրած հայտի թիվ 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

4. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 17.08.2016թ. ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է ***422,673,442*** (չորս հարյուր քսաներկու միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ գնային առաջարկ:

5. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 31.08.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել եզրակացություն «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. ՀՀ ֆինանսների նախարարության ՏՏԵՆՋ վարչության 02.09.2016թ. եզրակացության համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է՝ 396,626,540 (երեք հարյուր ինսունվեց միլիոն վեց հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

7. «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 08.09.2016թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, ինչի հիմքով էլ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, (այսուհետև նաև՝ Կենտրոն) ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 26.09.2016թ. թիվ 01/04.1/3553-16 գրությամբ, «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 09.09.2016թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ԳԲԽ98/16 բողոքը քննող հանձնաժողովին եզրակացություն տալու համար խնդրել է հայտնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

9. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 10.10.2016թ. թիվ 1/6-1/30490-16 գրության համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) ***նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 431.626.540 ՀՀ դրամ:***

<u>4. ԳԲԽ-106/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 07.10.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 10.10.2016թ. թիվ 1/6-1/30490-16 գրությունը, գտնում է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 07.10.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նույն Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապա-

տասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝

«Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

(...)

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.09.2016թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, ինչի հիմքով էլ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Ընկերությունը 07.10.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը չի համապատասխանում իրակա-նությանը, քանի որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացրած գնային առաջարկից:

Կենտրոնի կողմից 26.09.2016թ. թիվ 01/04.1/3553-16 հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 10.10.2016թ. թիվ 1/6-1/30490-16 գրությամբ հայտնել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն (2016թ.) ***նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 431.626.540 ՀՀ դրամ:***

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 10.10.2016թ. թիվ 1/6-1/30490-16 գրության համաձայն, Ընկերության նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է ***431.626.540 ՀՀ դրամ***, որը պակաս չէ Ընկերության

ներկայացրած գնային առաջարկից՝ **422,673,442 ՀՀ դրամ:** Այսինքն, Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասով բավարարում է հրավերի պահանջներին, հետևաբար Ընկերության հայտն այս հիմքով ենթակա չէ մերժման: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ բողոքը ենթակա է բավարարման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնահատող հանձնաժողովի 08.09.2016թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը ենթակա է դադարեցման՝ գտնում ենք, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 07.10.2016թ. բողոքով ներկայացրած Գնահատող հանձնաժողովի՝ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը՝ այդպիսի որոշում կայացված լինելու դեպքում, դադարեցնելու պահանջը նույնպես ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնն առաջարկում է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 07.10.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 08.09.2016թ. թիվ 6 արձանագրության 1.2 կետով կայացված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու մասին որոշումը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը՝ այդպիսի որոշում կայացված լինելու դեպքում:

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-106/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան